որ ընկաւ 772 թուի կռուում։ Այս հաշուով Սահլ՝ ծնուած ոչ ուշ քան 772 տարին, զառամեալ 80 ամեայ ծերուկ պիտի լինէր 852 թուին իր գերութեան ժամանակ — ինչ որ անհնարին չէ, բայց քիչ հաւանական։

Աղուանից պատմագիրը Սահլին անուանում է Եռանշահիկ։ Այսպէս է նա կոչում հին բնիկ իշխանական տունը, որ Կողբից եւ եթ տիրում էր Երկրին մինչեւ վեցերորդ դարի վերջերը, երբ երեւան եկաւ նոր՝ Միհրական կոչուած, պարսիկ տոհմը եւ տեւեց մինչեւ իններորդ դարի սկիզբները։

Կարծել որ Սահլը Եռանշահիկ էր այն մտքով, որ պատկանում էր երկու դար յառաջ հանդած տան, բաւարար հիմք չկայ։ Փաստն այն է որ Սահլ Միհրական տոհմից չէր, իսկ եթէ պատմիչն ուզում է նրա մէջ տեսնել հին արեան նոր ընձիւղ, տեղական հայրենասիրութեան թելադրանքն է քան լուրջ պատմական տեսութիւն։

Սահլ Սմբատեան եկուոր աշխարհակալ է Աղուանից աշխարհում, ի՞նչ մերձաւոր պայմաններում, յայտնի չէ։ Իններորդ դարում առաւելապէս Բագրատունի իշխանական մեծ եւ զօրեղ տոհմն էր, որ աշխարհակալական ձգտումներ ունէր եւ կարողութիւն։ Անհաւանական չէ որ Սահլը եւս Բագրատունեաց շառաւիղներից լինէր։

Իններորդ դարի սկզբում Սահլի հետ միաժամանակ պատմական ասպարէզի վրայ երեւում է Սիւնեաց աշխարհում նոր իշխանական տուն յանձին Վասակի։

Ո՞վ է այս Վասակը։ Արդեօք հին իշխանական տոհմն է, որ մէկուկէս դար լռութիւնից յետոյ վերակենդանանում է։ Վերջին իշխանը Գրիգոր Սիւնին էր, որ Մուշեղ Մամիկոնեանի հետ ընկերացաւ Ատրպատականի Ռոստոմ զօրավարին՝ ճակատելու ընդդէմ արաբներին Կադեսիայի հռչակաւոր մարտում 636 թուին։ Այնուհետեւ ոչինչ չէ լսւում Սիւնեաց իշխանների մասին։ Ութերորդ դարի խրոմալից պատմութեան մէջ նրանք չեն յիշատակւում։ Եւ յանկարծ անյայտութիւն վարագոյրի ետեւից ելնում է Վասակ Սիւնի իններորդ դարի սկզբում, եւ նրա զաւակները հաստատւում են ոչ միայն Սիւնիքում, այլ եւ Արցախում։ Միեւնոյն ժամանակ Սահակ անուն իշխանը գրաւում է Գեղարքունիք «բռնադրոսութեամբ», ինչպէս ասում է պատմագիրը։

Ի՞նչ կապ կայ Սահակի եւ Վասակի մէջ, որոշ չէ։ Օրբելեան հաւատացնում է, որ Սահակը Վասակի որդին է։ Հները՝ (Յովհ. կաթողիկոս եւ Մովս. Կաղանկատուացին) Սահակի գիծը անուանում են Հայկազունի, որով ուզում են ասել, որ Սահակը սերում էր Հայկեան Գեղամից։

Սիւնեցիք յայտնի էին հնում անկախական տրամադրութեամբ, մինչդեռ նոր իշխանական տունը՝ լինի Վասակի թէ մանաւանդ Սահակի գիծը, սերտ յարելութիւն է ցոյց տալիս Բագրատունեաց քաղաքականութեան։

Նորէն կասկած է ծագում, արդեօ՞ք Սիսական նոր տոհմը արենակից չէ Բագրատունիներին։ Միակ հարուստ եւ բազմածին ցեղը, որ փարթամ ծառի նման ոստեր էր արձակում իր շուրջը, Բագրատունիք էին։ Անսպասելի չէ, եթէ մի ոստ էլ հասած լինէր Սիւնիք, ինչպէս թեւակոխել էր աւելի հեռու Աղուանք։

Բիւզանդական սահմանների վրայ հաստատուած էին Մսակերի եղբայրը Շապուհ Սպերում եւ Մսակերի հօրեղբօր սերունդը՝ Աշոտ Կիւրապաղատ Կղարջքում։ Շապուհ ընկաւ, ինչպէս տեսանք, Սեւոդայի դէմ կռուելիս 824 թուին, թողնելով իշխանութիւնը իր Աշոտ որդուն։ Սրա որդին էր Շապուհ Բագրատունի պատմագիրը։ Հաւանական է, որ առաջին Շապուհը, Մսակերի եղբայրը այն Շապուհ Բագրատունին է, որի պատուէրով Ղեւոնդ երէց գրել է իր պատմութիւնը։

Շապուհի դրացին էր իր հօրեղբօր որդի (եւ ոչ թոռն, ինչպէս Վարդանի մօտ է) Աշոտ, որ Լեւոն հայ կայսրից (813–820) կիւրապաղատութեան պատիւ էր ստացել։ Սրա հայրը Վասակ=Ատներսեհն էր, որ Բագրեւանդի խռովութեան ժամանակ քաշուել էր Տայք եւ Կղարջք։ Նրա որդին Աշոտ կարողացաւ ընդարձակել իր իշխանութիւնը եւ «տիրեաց ի Կղարջաց մինչեւ ի Տփխիս լեռնակողմամբ հանդերձ» (Վարդան, էջ 78)։ Աշոտ փորձեց իր հօր եղբօրորդիներին՝ Մսակերին եւ Շապուհին օգնել ընդդէմ Զահապի, երբ սա Դուինը գրաւել էր։